*Թարգմանված է անգլերենից:*

Առկա է կազմակերպության տարբերանշանը:

Հռոմ, Իտալիա Հունիսի 19, 2019 թ.

# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Սույնով հավաստում ենք, որ «ՋԻ.ՊԻ. Էնջիներիա Ս.ր.լ. Ջեստիոնե Պրոջետի դի էնջիներիա» ընկերությունը, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Հռոմում (հասցե՝ Վիալե Տիցիանո 3), սահմանված կարգով գրանցված է Ինժեներական և տնտեսական խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիայում (OICE): Գրանցման համար՝ 56/1987:

Ըստ LD 50/16-ի 46-րդ հոդվածի, այն է՝ հանրային աշխատանքների ոլորտի լիազորված ներկայացուցիչների հետ պայմանագրերի կնքման ներքին և արտաքին կարգավորումներ, «ՋԻ.ՊԻ. Էնջիներիա Ս.ր.լ. Ջեստիոնե Պրոջետի դի էնջիներիա» ընկերությունը, որպես 02/12/2016 թ-ին 263 օրենսդրական ակտի 3-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող նախագծող ընկերություն, լիազորված է կատարել նախնական, վերջնական և աշխատանքային նախագծման աշխատանքեր, աշխատանքների վերահսկողություն և տրամադրել տեխնիկական-ադմինիստրատիվ աջակցություն:

Իտալիայում նախագծման, շինարարության և աշխատանքների վերահսկողության ոլորտում, ընկերությունները կատարում են իրենց աշխատանքներ 50/16 իրավական ակտի համաձայն՝ Աշխատանքների, ծառայությունների հանրային պայմանագրերի օրենսգրքի 2014/24/EC կարգավորման համաձայն և չկա օրենսդրական պահանջ կամ կարգավորում, առ այն, որ շինարարության ոլորտում խորհրդատվական ծառայություններ մատուցող ընկերությունները պետք է լիցենզավորված լինեն նմանատիպ գործնեություն իրականացնելու համար:

Ինժեներական և տնտեսական խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիան ունի 338 գրանցված անդամ և Իտալական արդյունաբերության համընդհանուր կոնֆեդերացիայում ներկայացնում է Իտալիայում և արտասահմանում գործող ինժիներական, ճարտարագիտական և տեխնիկական խորհրդատվական ընկերությունները:

Միջազգային հարթակում Ինժեներական և տնտեսական խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիան Ինժեներական խորհրդատվական ասոցիացիայի Եվրոպական ֆեդերացիայի (EFCA) գրանցված անդամ է, որը համախմբում է ինժեներական և

*Թարգմանված է անգլերենից:*

Առկա է կազմակերպության տարբերանշանը:

Ճարտարագիտական ընկերությունների եվրոպական ասոցիացիաները: Այն նաև անդամակցում է Ինժեներ-խորհրդատուների միջազգային ֆեդերացիային (FIDIC):

Ի վկայություն՝
Գաբրիելե Շիկոլոնե [ստորագրություն]